Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1345-24.02.2012-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածում.

1) 2-րդ մասում «հանձնվում է ստացականով (այսուհետ՝ պատշաճ ձևով)» բառերից հետո լրացնել «,բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի» բառերը,

2) լրացնել 4-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«4. Հայցվորն իր ներկայացրած հայցադիմումում, պատասխանողն՝ իր պատասխանում, իսկ երրորդ անձն՝ իր դիմումում կարող է նշել իր էլեկտրոնային հասցեն, որին դատարանի կողմից ստանալը հավաստող միջոցի կիրառմամբ ուղարկված ծանուցագիրը սույն հոդվածի 2-րդ մասի իմաստով հանդիսանում է պատշաճ ծանուցում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

ՀՀ Աժ առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունների

հ/հ	Առաջարկության հեղինակը, Գրության ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածում լրացվող նոր՝ 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4. Հայցվորն իր ներկայացրած հայցադիմումում, պատասխանողն՝ իր պատասխանում, իսկ երրորդ անձն՝ իր դիմումում կարող է նշել իր էլեկտրոնային հասցեն, որին դատարանի կողմից ստալը հավաստող միջոցի կիրառմամբ ուղարկված ծանուցագիրը սույն հոդվածի 2-րդ մասի իմաստով հանդիսանում է պատշաճ ծանուցում:»:	Ընդունվել է	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածում լրացվող նոր՝ 4-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «4. Հայցվորն իր ներկայացրած հայցադիմումում, պատասխանողն՝ իր պատասխանում, իսկ երրորդ անձն՝ իր դիմումում կարող է նշել իր էլեկտրոնային հասցեն, որին դատարանի կողմից ստալը հավաստող միջոցի կիրառմամբ ուղարկված ծանուցագիրը սույն հոդվածի 2-րդ մասի իմաստով հանդիսանում է պատշաճ ծանուցում:»: